Ա Ռ Ա Ր Կ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն Ն Ե Ր

ՀՀ ՇԻՐԱԿԻ ՄԱՐԶԻ ԱՐԹԻԿ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 1-Ի ԹԻՎ ԹԻՎ 409-Ա-419-Ա ԵՎ ՀՈՒՆԻՍԻ 7-Ի ԹԻՎ 420-Ա ՈՐՈՇՈՒՄՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Թիվ թիվ 409-Ա-411-Ա, 414-Ա, 415-Ա, 419-Ա որոշումների բովանդակությունների մեջ և 412-Ա որոշման 2-րդ կետով տրամադրված հասցեները չեն համապատասխանում ՀՀ կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշման 1-ին կետով սահմանված կարգի 2-րդ կետի 7-րդ ենթակետի դրույթին:

Թիվ 409-Ա որոշման նախաբանում «հաստատված» բառը փոխարինել «սահմանված» բառով:

Որոշումն անհրաժեշտ է համապատասխանեցնել ՀՀ հողային օրենսգրքի 4-րդ հոդվածի 2-րդ մասին, համաձայն որի՝ հողային հարաբերությունների սուբյեկտ են նաև համայնքները:

Թիվ թիվ 410-Ա և 411-Ա որոշումներում անհրաժեշտ է գրառում կատարել նաև անշարժ գույքի սեփականտիրոջ վերաբերյալ: Բացի այդ, որոշումների բովանդակությունների մեջ «գյուղ Փանիկ հասցեում գտնվող» բառերը փոխարինել «Արթիկ համայնքի Փանիկ գյուղում գտնվող» բառերով:

Թիվ 412-Ա որոշման վերնագրում ուժը կորցրած ճանաչվող իրավական ակտի կրճատ անվանումը ճիշտ չի գրառված: Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի դրույթի՝ ենթաօրենսդրական նորմատիվ իրավական ակտի կրճատ անվանումը հիշատակելիս դրանում հետևյալ հաջորդականությամբ ներառվում են այդ ակտն ընդունող մարմնի անվանումը, ընդունման տարին, ամիսը, ամսաթիվը, ակտի հերթական համարը, բնույթը և տեսակը:

Որոշման նախաբանում «հաստատված» բառը փոխարինել «սահմանված» բառով: Բացի այդ, որոշման 1-ին կետը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 17-րդ հոդվածի 8-րդ մասի պահանջին, համաձայն որի՝ հղում կատարելիս նորմատիվ իրավական ակտի լրիվ անվանումը հիշատակվում է նորմատիվ իրավական ակտում փոփոխություններ կամ լրացումներ նախատեսող կամ նորմատիվ իրավական ակտի գործողությունը դադարեցնող ակտում:

Որոշման 4-րդ կետում «համայնքապետարանի» բառից առաջ անհրաժեշտ է գրառել համայնքի անվանումը:

Թիվ 417-Ա որոշումը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի 1-ին մասին, համաձայն որի՝ իրավական ակտերում փոփոխություն կամ լրացում կատարում է միայն այդ նորմատիվ իրավական ակտն ընդունած մարմինը կամ նրա իրավահաջորդը:

Թիվ 418-Ա որոշման վերնագիրը չի համապատասխանում «Նորմատիվ իրավական ակտերի մասին» ՀՀ օրենքի 18-րդ հոդվածի 6-րդ մասի, իսկ բովանդակությունը՝ 17-րդ հոդվածի 8-րդ մասի և 33-րդ հոդվածի դրույթներին:

Թիվ 419-Ա որոշման բովանդակությունն անհրաժեշտ է գրառել առանձին համարակալված դրույթներով:

Թիվ 420-Ա որոշման նախաբանում ՀՀ կառավարության 2002 թվականի փետրվարի 2-ի N 88 որոշմանը կատարված հղումը սխալ է գրառված:

Որոշումների ձևաթղթերի վերևի մասում համայնքի ղեկավարի պաշտոնը թերի է գրառված:

Կատարող՝ Նաիրա Մարտիրոսյան

29.06.2022թ.